ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Սույն թվականի դեկտեմբերի 8-9-ը երկօրյա աշխատանքային այցով Մոսկվայում էր գտնվում Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Դեկտեմբերի 8-ին Գերաշնորհ Սրբազան Հայրը հանդիպում ունեցավ Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին Հարաբերությունների Բաժնի նախագահ, Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայ Առաքելական Եկեղեցու՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչների միջև երկկողմանի քննարկումների թեմատիկան, ինչպես նաև արծարծվեցին մի շարք այլ հարցեր, որոնք վերաբերվում են միջքրիստոնեական կազմակերպությունների հետ երկխոսության արդի հիմնախնդիրներին, Արևելյան Ուղղափառ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսության հեռանկարներին:

Հատուկ ուշադրություն դարձվեց հատկապես ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի ծրագրերին առնչվող հարցերին:

Հաջորդ օրը Եզնիկ Սրբազանը Մոսկվայի Պատրիարքարանի ուխտագնացությունների կենտրոնում (Ունիվերսիտետսկայա հյուրանոց), որպես ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի գործադիր կոմիտեում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, մասնակցեց ԱՊՀ երկրների Միջկրոնական Խորհրդի (ԱՊՀ ՄԽ) գործադիր կոմիտեի առաջին նիստին, ուր քննարկվել են ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի գործունեության ընթացիկ հարցերը և ընդունվել այդ կառույցի գործունեության հրամայականները:

Քննարկումների ընթացքում որոշվել են գործունեության երկու հիմնական ուղղություններ.

- Հասնել ընդհանուր դիրքորոշման՝ միջազգային կազմակերպությունների հետ երկխոսության ժամանակ,
- Ստեղծել համագործակցության ծրագիր՝ հաղթահարելու կրոնական և ազգային անհանդուրժողականությունը:

Նիստի ժամանակ նաև որոշվել է, որ ԱՊՀ ՄԽ-ը 2005 թվականի մայիսի 9-ին պետք է նշի Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակը: ԱՊՀ ՄԽ գործադիր կոմիտեի հաջորդ նիստը տեղի կունենա 2005 թվականի նոյեմբերին Միջինասիական հանրապետություններից մեկում:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին